ՀԱՆԴԻՊՈՒՄ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

20.12.2024 20:09

Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը, տեղակալ Հարութ Ակլունցը, խորհրդի անդամներ Կարեն Մեժլումյանը և Հարություն Հարությունյանը հանդիպում են ունեցել զանգվածային լրատվության միջոցների գործընկերների հետ:

Հանդիպումն անցել է թեյի սեղանի շուրջ՝ ոչ պաշտոնական ձևաչափով:

Ողջունելով լրագրողներին՝ Սիմոն Բաբայանը նշել է, որ հատուկ է ընտրվել հանդիպման այս ձևաչափը, որպեսզի անկաշկանդ զրույցի ընթացքում հնարավոր լինի հասկանալ փաստաբանական համայնքի հետ համագործակցության շրջանակներում հանդիպող խնդիրները և դրանց համար անհրաժեշտ լուծումները, որոնք կնպաստեն համագործակցության զարգացմանը:

Փաստաբանների պալատի նախագահը մեդիայի գործընկերներին է ներկայացրել 2024 թվականի ընթացքում Պալատի կողմից կատարված մի շարք աշխատանքներ: Նա նաև խոսել է փաստաբանական համայնքի առաջ ծառացած խնդիրների մասին, մասնավորապես փաստաբանների հարկային բեռի ավելացման և անվճար իրավաբանական օգնության սահմանափակման, որի հետևանքով վնասվելու է Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությունը:

Իր եզրափակիչ խոսքում Սիմոն Բաբայանը զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներին շնորհակալություն է հայտնել փաստաբանական ինստիտուտին վերաբերելի թեմաները, փաստաբանական համայնքի խնդիրները պատշաճ լուսաբանելու և Պալատի հետ իրականացվող համագործակցության համար: Նա շնորհակալություն է հայտնել նաև Միավորված ազգերի կազմակերպության Զարգացման ծրագրերին (UNDP)՝ սույն միջոցառման կազմակերպման և Պալատի հաղորդակցության կարողությունների զարգացմանը աջակցելու համար:

Այնուհետև փաստաբանական և լրագրողական համայնքի ներկայացուցիչները քննարկել են ոլորտային ամենատարբեր թեմաներ:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })